Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու» հանդեսն ունի մասնագիտական որոշակի ուղղվածություն՝ գրականագիտություն, լեզվաբանություն, լրագրություն, մանկավարժություն և մեթոդիկա, պատմագիտություն և իրավագիտություն, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, տնտեսագիտություն: Հոդվածները տպագրվում են երեք լեզուներով (հայերեն, ռուսերեն, անգլերեն):

Մասնագիտական յուրաքանչյուր ուղղության հոդվածները տպագրության է արտոնում համապատասխան խմբագրական խորհուրդը: Գիտական հոդվածների ընդունման պահանջներն են՝

- կից ունեն համապատասխան ամբիոնի, միջամբիոնային ենթախորհուրդների երաշխավորությունը՝ ստորագրված ամբիոնի վարիչի, միջամբիոնային ենթախորհուրդների նախագահների կողմից;
- ունեն մասնագիտական գրախոսական՝ տրված գիտական խմբագրական խորհրդի կողմից;
- ունեն մասնագիտական գրախոսական՝ տրված գիտությունների դոկտորի կամ թեկնածուի կողմից;
- ունեն գիտական ղեկավարի կողմից տրված երաշխավորություն կամ գրախոսական;
- ունեն հղում - ծանոթագրություններ;
- ունեն նշված լեզուներով ամփոփումներ և բանալի բառեր;
- պարունակում են անհրաժեշտ տեղեկություններ հեղինակ(ներ)ի մասին;
- ծավալը 5 -12 համակարգչային ստանդարտ էջ:

Դրսեկ հեղինակների հոդվածների համար միջամբիոնային ենթախորհուրդների երաշխավորությունը անհրաժեշտ չէ:

Գիտական աշխատանքը կարող է ուղարկվել արտաքին գրախոսման: Նյութերն ընդունվում են համակարգչային շարվածքով(կրիչով), տառատեսակը՝ Arial Unicode (հայերեն), Times New Roman(ռուսերեն և անգլերեն լեզուներով), տառաչափը՝ 12, տողահեռավորությունը՝ 1,15: